ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.11.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/100

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ

Բողոք բերող՝ «Մեգիէլ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝ Տ. Ջիլավյանի, Կ. Դրամբյանի,

«Մեգիէլ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ս. Փարիզյանի, ներկայացուցիչ՝ Ա. Սարգսյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/91» ծածկագրով բաց մրցույթ, բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Մեգիէլ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 26.10.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/91» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին փոփոխություններ կատարել հրավերի 1-ին, 2-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժիններում և պայմանագրի մատակարարման ժամկետում:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 26.10.2021թ.-ին:

27.10.2021թ.-ին է www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/100 համարի ծածկագիրը:

03.11.2021թ.-ին, 11.11.2021թ.-ին և 19.11.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 11.11.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 19.11.2021թ.-ին:

2. «Մեգիէլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Մեգիէլ» ՍՊԸ-ն 26.10.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1.1 «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության (հետայսու՝ Պատվիրատու) կողմից հայտարարվել է ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/91 ծածկագրով բաց մրցույթ, որն իրականացվելու է մեկ փուլով:

1.2 Հրավերը հրապարակվել է 12.10.2021թ և մասնակցության հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված 27.10.2021թ ժամը 12:00-ը ներառյալ: Հայտերի բացման ժամկետն է 27.10.2021թ ժամը 12:00-ը:

1.3 «Մեգիէլ» ՍՊ ընկերությունը (հետայսու՝ Ընկերություն) ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/91 ծածկագրով մրցույթին մասնակցելու նպատակով ուսումնասիրելով հրավերը՝ տեխնիկական բնութագրերում արձանագրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված նորմերի խախտում:

1.4 Ըստ Ընկերության «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշման պահանջին չեն համապատասխանում մրցույթի 1-ին, 2-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինները:

2.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն Օրենքի նպատակն է ի թիվս այլի գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը:

Համաձայն Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Ներկայացված նորմերի վերլուծությունից փաստում ենք, որ գնումների օրենսդրությունը հիմնվում է գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, ապահովելով գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն ուռալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշման (հետայսու Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:

Այսպես.

1-ին չափաբաժնով անհրաժեշտ է ԱԱՇ խողովակների հավաքածու մանկական հետևյալ բնութագրով.

ԱԱՇ-ի խողովակների հավաքածու մանկական օքսիգենատորների համար, ապիրոգեն, լատեքսազերծ, մանրէազերծ, պատված Ֆիզիո նյութով, պատրաստված համաձայն պատվիրատուի կողմից հաստատված սխեմայի (պահանջի դեպքում սխեման տրամադրվում է 1 աշխատանքային օրվա ընթացքում):

Գնման ժամանակացույցի համաձայն որպես ընհանուր պայման սահմանված է, որ առաջին խմբաքանակի մատակարարումը Գնորդը չի կարող պահանջել պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրից շուտ, եթե դրան համաձայն չէ Վաճառողը: Այնուհետև, մատակարարումները պետք է իրականացվեն ըստ փաստացի պատվերների ոչ ուշ քան 5 աշխատանքային օրվա ընթացքում:

1-ին չափաբաժնով պահանջվող ապրանքի սխեման հաստատվելով պատվիրատուի կողմից, դա նշանակում է, որ այն ստանդարտ արտադրվող ապրանք չէ և դրա արտադրման համար ժամանակ է անհրաժեշտ: Այդ ժամանակը գործնականում տևում է 8 շաբաթ և ևս 18 օր է դրա ներկրումը ՀՀ և մեկ շաբաթ էլ արտադրողի կողմից սխեմայի հաստատման համար: Մինչդեռ գնման ժամանակացույցի համաձայն առաջին պատվերը չի կարող ներկայացվել 20 օրից շուտ, իսկ հաջորդիվ մատակարարումները պետք է իրականացվեն փաստացի պատվերից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Սխեմայով արտադրվող ապրանքի արտադրման և ներկրման ժամկետների պայմաններում հնարավոր չէ պայմանագրի ուժի մեջ մտնելուց 20 օր հետո պատշաճ մատակարարում ապահովել:

Բացի այդ հետագայում, եթե մատակարարը պատվեր է ներկայացնում արտադրողին պահանջվող ապրանքը ներկրելու նպատակով, որպեսզի Պատվիրատուի կողմից պատվերի դեպքում հնարավոր լինի 5 օրում ապահովել մատակարարումը, այս դեպքում էլ հնարավոր է Պատվիրատուն պատվեր չներկայացնի քանի որ գնումն իրականացնում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով: Այս դեպքում հատուկ սխեմայով արտադրված ապրանքի իրացումը այլ կլինիկաներում հնարավոր չէ:

Ներկայացված հիմնավորմամբ անհրաժեշտ է փոփոխել մատակարարման ժամկետը, քանի որ գործնականում հնարավոր չէ այդ ժամկետում պատրաստվի պահանջվող ապրանքը:

*2-րդ չափաբաժնով պահանջվում է ԱԱՇ օքսիգենատոր մանկական Տերումո Կապիոքս, CX*FX05R հետևյալ բնութագրով.*

Արյան արհեստական շրջանառության ժամանակ կիրառվող նորածնային-մանկական օքսիգենատոր գործարանային կոմպլեկտավորումով, ներկառուցված արտերիալ ֆիլտրով:

Ռեզերվուարի ծավալը HVR 1200մլ, մաքսիմալ արյան հոսքը լիտր/րոպե, օքսիգենատորի տարողունակության ծավալը (Prime volume) ոչ ավել 45մլ, (Membrane surfase area) մեմբրանի մակերեսը կամ գազափոխանակման մակերեսը ոչ 0,5ք.մ., արտերիալ ֆիլտրը ցուցանիշով: Պայմանագրի կատարման փուլում ներկայացվում է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ:

5-րդ չափաբաժնով պահանջվում է ԱԱՇ օքսիգենատոր մանկական Եվրոսեթ, A G5232 հետևյալ բնութագրով.

Արյան արհեստական շրջանառության ժամանակ կիրառվող մանկական օքսիգենատոր, գործարանային կոմպլեկտավորմամբ, ներկառուցված արտերիալ ֆիլտրով: Ռեզերվուարի ծավալը HVR 2200մլ, մաքսիմալ արյան հոսքը 3,5 լիտր/րոպե, օքսիգենատորի տարողունակության ծավալը՝ (Priming volume) ոչ ավել 130մլ, (Membrane surfase area) մեմբրանի մակերեսը կամ գազափոխանակման մակերեսը ոչ ավել քան 0,84ք.մ., արտերիալ ֆիլտրը երկշերտ՝ 80μm + 38μm ցուցանիշներով: Պայմանագրի կատարման փուլում ներկայացվում է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ:

6-րդ չափաբաժնով պահանջվում է ԱԱՇ օքսիգենատոր մեծահասակի Եվրոսեթ Horizon AF Plus հետևյալ բնութագրով.

Արյան արհեստական շրջանառության ժամանկ կիրառվող մեծահասակի օքսիգենատոր, գործարանային կոմպլեկտավորմամբ, ներկառուցված արտերիալ ֆիլտրով: Ռեզերվուարի ծավալը HVR 4500մլ, մաքսիմալ արյան հոսքը 7,0 լ/րոպե, օքսիգենատորի տարողունակության ծավալը՝ (Prime volume) 225մլ-ից 275մլ, (Membrane surfase area) մեմբրանի մակերեսը կամ գազափոխանակման մակերեսը 1,65-1.9ք.մ., փականի վակուումի անկումը 100-ից 155 մմ. սնդիկի սյուն: Պայմանագրի կատարման փուլում ներկայացվում է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ:

Պատվիրատուն տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցի ընդհանուր պայմաններում նշել է որ բնութագրերում գնման առարկայի առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին կատարված հղումների հետ միասին հասկանալ «կամ համարժեքը» բառերը:

Առաջին հայացքից կարծես թե Պատվիարտուն ղեկավարվում է Օրենքով, սակայն ինչպես միշտ Պատվիրատուն խախտում է Օրենքի 13-րդ հոդվածը, նույն հոդվածի 5-րդ մասը

բացառություն է սահմանում, սակայն Պատվիրատուն այն մեկնաբանում է ոչ իրավական տրամաբանությունից ելնելով: Նշված հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Վերը ներկայացված տեխնիկական բնութագրերի ուսումնասիրությունից ակնհայտ է, որ Պատվիրատուն գնվող ապրանքը բնութագրել է և դա անհնարին չի եղել, այս պարագայում նրա կողմից պահանջվող ապրանքի արտադրողին և ապրանքային նշանին հղում անելով խախտել է Օրենքի 13-րդ հոդվածը, որն էլ չի ապահովում Օրենքի 3-րդ հոդվածի կիրառելիությունը:

Ի դեպ վիճարկվող չափաբաժիններով ներկայացված տեխնիկական բնութագրերը բացառապես նույնական են այն ապրանքին, որի արտադրողի և ապրանքային նշանին հղում է արել Պատվիրատուն:

Հարց է առաջանում, համարժեք ապրանքի գնահատումը ինչի հետ համեմատության արդյունքում պետք է գնահատվի, նշված արտադրողի և ապրանքային նշանի ապրանքի նույնական համընկնումի, թե ներկայացված չափորոշիչների, որոնք նույնպես նույնական են այն արտադրանքին որի արտադրողին հղում է արված:

Այսպիսով, Պատվիրատուն խախտել է Օրենքի նշված հոդվածը:

2-րդ և 5-րդ չափաբաժիններով պահանջվող ապրանքները պետք է ներկայացվեր մեկ չափաբաժնով, չափորոշիչները ներկայացնելով տիրույթով, որպեսզի ապահովեր մասնակիցների մրցակցություն և չհանգեցնի գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

Պատվիրատուի ներկայացրած տեխնիկական բնութագրի յուրաքանչյուր չափաբաժինը ներկայացված է դիպուկ մեկ արտադրողի ապրանքատեսակի և մեկ մատակարարի համար: Վիճարկվող չափաբաժինների տեխնիկական բնութագրերը ներկայացված են Օրենքի խախտմամբ, հետևաբար մրցույթի անցկացումը այդ բնութագրերով չի ապահովելու Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված նպատակները և սկզբունքներիը:»:

Ելնելով վերոգրյալներից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/91» ծածկագրով բաց մրցույթի գնահատող

հանձնաժողովին փոփոխություններ կատարել հրավերի 1-ին, 2-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժիններում և պայմանագրի մատակարարման ժամկետում:

3. <u>«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 27.10.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/17629-2021 գրությամբ դիմել է «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 26.10.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 29.10.2021թ.-ին թիվ 08-455 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Հարգելի պարոն Օհանյան Ի պատասխան «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/91 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետև՝ Ընթացակարգ) վերաբերյալ 26.10.2021թ. ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/100 ծածկագրով բողոքի, հայտնում ենք հետևյալը.

Ողջ գնումների տրամաբանությունը սկսվում է այն թիվ 1 նախապայմանից, որ գնումը պետք է ուղղված լինի Պատվիրատուի օբյեկտիվորեն հիմնավորված կարիքին համապատասխան գնման առարկայի ձեռքբերմանը: Միայն այդ նախապայմանը ապահովելուց հետո պետք է ապահովվի նաև մրցակցային դաշտը, ֆինանսական շահավետությունը և այլ պայմաններ, որոնք նախատեսված են ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ: Այդ նախապայմանի ապահովմանն է ուղղված հենց «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև Օրենք) 13-րդ հոդվածի 1-ին կետը և 2-րդ կետի 3-րդ ենթակետը համաձայն որոնց.

«Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման

առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:»,

«Գնման առարկայի բնութագրերը պետք է լինեն օբյեկտիվորեն՝ հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը»

Հայտնում ենք նաև այն, որ սրտի վիրաբուժության նպատակով բժշկական կենտրոնը տվյալ պահին կիրառում է մանկական և մեծահասակի օքսիգենատորներ, որոնք ունեն արյան հոսքի առավելագույն թողունակության հետևյալ ցուցանիշները՝ 1500մլ/րոպե, 2000մլ/րոպե, 2500մլ/րոպե, 3500մլ/րոպե, 5000մլ/րոպե, 6000մլ/րոպե, 7000մլ/րոպե: Բնականաբար այս բոլոր ապրանքներն էլ ունեն իրենց այլ անհրաժեշտ բնութագրիչ պարամետրերը, որոնցից ոմանք (խիստ կարևորները) ներառված են գնման ընթացակարգի տեխնիկական բնութագրերում: ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/91 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներառված են վերոնշյալ ապրանքներից մի քանիսը 1500մլ/րոպե, 2000մլ/րոպե, 2500մլ/րոպե, 3500մլ/րոպե, 7000մլ/րոպե, ինչպես նաև ներառված է մանկական օքսիգենատորների հետ կիրառվող խողովակների հավաքածու, մանկական օքսիգենատորի արտերիալ ֆիլտր: Բոլոր օքսիգենատորների բնութագրերը կազմված են նույն տրամաբանությամբ, սակայն բողոքը ներկայացվելէ ընտրանքային կարգով, ինչում հստակ դիտվում է Պատվիրատուի բնականոն գործնեությանը խոչընդոտելուն ուղղված միտում:

Բժշկական ոլորտը հայտնի է իր այնպիսի առանձնահատկությամբ, երբ խիստ կարևոր նշանակության ապրանքները տարբեր արտադրողների մոտ արտադրվում են տարբեր բնութագրիչներով և դրանք ամբողջությամբ ու հստակ նկարագրելու պայմաններում բախվում ենք միայն մեկ արտադրողի ապրանքի, սակայն դա չի նշանակում, որ պետք է գնվի կարիքին չբավարարող ապրանք: Այդ իրավիճակներից զերծ մնալու ձգտումով պայմանավորված շատ հաճախ տեխնիկական բնութագրերը լինում են ոչ ամբողջական և Պատվիրատուները ստիպված են լինում հղում կատարել արտադրողին (նշելով „կամ համարժեքը,, բառերը), փորձելով բարեխիղճ հնարավոր մատակարարներին հուշել, թէ ինչ ապրանքների մասին է գնում խոսքը: Միաժամանակ, առաջարկերի գնահատումը պետք է իրականացվի տեխնիկական բնութագրերում ներառված կոնկրետ ցուցանիշների համեմատմամբ, այլ ոչ թէ նշվող և առաջարկվող արտադրողների համեմատությամբ: ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/91 ծածկագրով գնման ընթացակարգում այդ մոտեցումն է ցուցաբերել Պատվիրատուի համապատասխան ստորաբաժանումը և չի կատարել Օրենսդրական որևէ խախտում:

1-ին չափաբաժնի մասով՝, ինչ վերաբերվում է ըստ գծագրի ապրանքի արտադրման պայմաններին, ապա դա տարբեր արտադրողների մոտ կարող է լինել տարբեր, սակայն դա չի կարող հիմք հանդիսանալ Պատվիրատուի կողմից գնման ժամկետների երկարացման համար: Միաժամանակ Բողոքաբերը գծագիրը ստացել է Պատվիրատուից 18.10.21թ-ին պահանջած նույն օրը, ընդ որում այդ նույն գծագիրը տրամադրված է եղել Մասնակցին նաև նախորդ ընթացակարգի շրջանակներում ս.թ. ապրիլ ամսին (կցվում է էլ. փոստից քաղվածք): Հաշվի առնելով նաև այն, որ գնումը կազմակերպված է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի պայմանների կիրառմամբ, գտնում ենք որ Մասնակիցը ուներ առավել քան բավարար ժամանակ իր գործընկեր արտադրողի հետ արտադրման և առաքման հետ կապված ժամկետները կազմակերպչական հարցերը ընդունետ ժամկետներում ապահովելու համար:

2, 5 և 6 չափաբաժինների օքսիգենատորների համար առաջարկների գնահատման մասով, ինչպես արդեն նշել ենք վերը, գնահատումն իրականացվում է համաձայն Օրենսդրության պահանջների տեխնիկական բնութագրերում ներառված կոնկրետ տեխնիկական ցուցանիշների հետ համեմատության միջոցով: Այս մասով խիստ կարևոր են ներկայացված ցուցանիշների համապատասխանությունը: Անկախ այն հանգամանքից, թէ աշխարհում առկա է մեկ այլ նման ցուցանիշներով ապրանք թէ ոչ, Պատվիրատուի կողմից համարժեք փոխարինելի չեն կարող համարվել տեխնիկական բնութագրերում նկարագրված պարամետրերի պահանջվող ցուցանիշներից տարբերվող ցուցանիշներով ապրանքները, քանի որ դա կհակասի հիմնական սկզբունքին՝ կարիքին համապատասխան գնում կատարելուն:

2-րդ և 5-րդ չափաբաժիններով ապրանքները մեկ չափաբաժնում խմբավորելու մասով, հայտնում ենք, որ դա արգելված է Օրենքով (25րդ հոդված), բացի այդ անընդունելի Պատվիրատուի կողմից, քանի որ դրանք իրարից էականորեն տարբերվող ապրանքներ են, ապահովում են շատ էական տարբերվող տարիքային (քաշային) խմբի վիրահատություններ և չեն կարող փոխարինել մեկը մյուսին: Կարծում ենք, որ Մասնակիցը տարիներ շարունակ հանդիսանալով նմանատիպ ապրանքների մատակարար, քաջ տեղյակ է դրա մասին և որպես բարեխիղճ և(կամ) կոմպետենտ մատակարար, առնվազն չպետք է նման հարց բարձրացներ:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2021/100 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 12.10.2021թ.-ին հայտարարվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/91» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ կամ Ընթացակարգ):

ii. Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել մինչև 27.10.2021թ.-ին ժամը 12:00-ն ներառյալ:

iii. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով (այսուհետ նաև՝ Հավելված 1) 1-ին, 2-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

1-ին չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«ԱԱՇ խողովակների հավաքածու մանկական»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«ԱԱՇ-ի խողովակների հավաքածու մանկական օքսիգենատորների համար, ապիրոգեն, լատեքսազերծ, մանրէազերծ, պատված Ֆիզիո նյութով, պատրաստած համաձայն պատվիրատուի կողմից հաստատված սխեմայի (պահանջի դեպքում սխեման տրամադրվում է 1 աշխատանքային օրվա ընթացքում):»:* Արտադրողի և ապրանքային նշանի անվանում չի նշվել: 2021թ.ի գնման պլանով նախատեսված ընդհանուր քանակը նշվել է 40 հատ:

2-րդ չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«ԱԱՇ Օքսիգենատոր մանկական»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Արյան արհեստական շրջանառության ժամանակ կիրառվող նորածնային-մանկական օքսիգենատոր գործարանային կոմպլեկտավորումով, ներկառուցված արտերիալ ֆիլտրով: Ռեզերվուարի ծավալը HVR 1200մլ, մաքսիմալ արյան հոսքը 1,5 լիտր/րոպե, օքսիգենատորի տարողունակության ծավալը՝ (Prime volume) ոչ ավել 45մլ, (Membrane surfase area) մեմբրանի մակերեսը կամ գազափոխանակման մակերեսը ոչ ավել քան 0,5ք.մ., արտերիալ ֆիլտրը 32μm ցուցանիշով: Պայմանագրի կատարման փուլում ներկայացվում է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ:»:* Արտադրողի և ապրանքային նշանի անվանում նշվել է՝ *«Տերումո Կապիոքս, CX*FX05R»:* 2021թ.ի գնման պլանով նախատեսված ընդհանուր քանակը նշվել է 20 հատ:

5-րդ չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«ԱԱՇ Օքսիգենատոր մանկական»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Արյան արհեստական շրջանառության ժամանակ կիրառվող մանկական օքսիգենատոր,*

գործարանային կոմպլեկտավորմամբ, ներկառուցված արտերիալ ֆիլտրով: Ռեզերվուարի ծավալը HVR 2200մլ, մաքսիմալ արյան հոսքը 3,5 լիտր/րոպե, օքսիգենատորի տարողունակության ծավալը՝ (Priming volume) ոչ ավել 130մլ, (Membrane surfase area) մեմբրանի մակերեսը կամ գազափոխանակման մակերեսը ոչ ավել քան 0,84ք.մ., արտերիալ ֆիլտրը երկշերտ՝ 80μm + 38μm ցուցանիշներով: Պայմանագրի կատարման փուլում ներկայացվում է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ:»: Արտադրողի և ապրանքային նշանի անվանում նշվել է՝ *«Եվրոսեթ, Trilly AF AG5232»:* 2021թ.ի գնման պլանով նախատեսված ընդհանուր քանակը նշվել է 10 հատ:

6-րդ չափաբաժնի համար՝ ապրանքի անվանումը և ապրանքային նշանը սահմանվել է *«ԱԱՇ Օքսիգենատոր մեծահասակի»*: Վերջինիս տեխնիկական բնութագիրը սահմանվել է՝ *«Արյան արհեստական շրջանառության ժամանկ կիրառվող մեծահասակի օքսիգենատոր, գործարանային կոմպլեկտավորմամբ, ներկառուցված արտերիալ ֆիլտրով: Ռեզերվուարի ծավալը HVR 4500մլ, մաքսիմալ արյան հոսքը 7,0 լ/րոպե, օքսիգենատորի տարողունակության ծավալը՝ (Prime volume) 225մլ-ից 275մլ, (Membrane surfase area) մեմբրանի մակերեսը կամ գազափոխանակման մակերեսը 1,65-1.9ք.մ., փականի վակուումի անկումը 100-ից 155 մմ. սնդիկի սյուն: Պայմանագրի կատարման փուլում ներկայացվում է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ:»:* Արտադրողի և ապրանքային նշանի անվանում նշվել է՝ *«Եվրոսեթ Horizon AF Plus»:* 2021թ.ի գնման պլանով նախատեսված ընդհանուր քանակը նշվել է 50 հատ:

iv. Հավելված 1-ով սահմանվել է նաև ընդհանուր պայմաններ, համաձայն որի՝ բնութագրերում գնման առարկայի առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին կատարված հղումների հետ միասին հասկանալ «կամ համարժեքը» բառերը:

Մատակարարման ժամկետները և քանակները. Պայմանագրի շրջանակներում ապրանքի մատակարարումն իրականացվելու է 2021թ. տարվա ընթացքում, ըստ փաստացի պատվերների, ընդ որում յուրաքանչյուր պատվերի առավելագույն քանակը չի կարող լինել ավելի պայմանագրի ընդհանուր քանակի 1/2-ից, եթե դրան համաձայն չէ Վաճառողը: Առաջին խմբաքանակի մատակարարումը Գնորդը չի կարող պահանջել պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրից շուտ, եթե դրան համաձայն չէ Վաճառողը: Այնուհետև, մատակարարումները պետք է իրականացվեն ըստ փաստացի պատվերների՝ ոչ ուշ քան 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Փաստացի կարիքից ելնելով նախատեսված քանակները կարող են ամբողջությամբ չպատվիրվել Պատվիրատուի կողմից և այդ մասով պայմանագիրը համարվում է լուծված հաշվարկային տարվա ավարտով: Մատակարարվող ապրանքները պետք է լինեն նոր, գործարանային փաթեթավորմամբ, պիտանելիության ժամկետները՝ հանձնման պահին առնվազն 75%-ը, բացառությամբ այն դեպքերի, երբ Պատվիրատուն կարիքից ելնելով համաձայնում է ընդունել ավելի կարճ ժամկետով ապրանք:

Ապրանքի մատակարարումը՝ բեռնափոխադրումը, բեռնաթափումը և տեղափոխումը մինչև համապատասխան պահեստ, իրականացվում է Կատարողի ուժերով և միջոցներով ք. Երևան, Արմենակյան 108/4 հասցեով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 26.10.2021թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված

լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի

Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ … կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ…:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ցանկացած պահանջ պետք է ապահովի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Տեխնիկական բնութագրով սահմանված այն չափորոշիչների մասով, որոնք պարունակում են հղում ապրանքային նշանին, սահմանված պետք է լինի «կամ համարժեք» արտահայտությունը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձն փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերն ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 12.10.2021թ.-ին հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/91» ծածկագրով բաց մրցույթի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով վեճի առարկա հանդիսացող 2-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով սահմանվել է ապրանքի անվանումը և ապրանքային նշանը, տեխնիկական բնութագիրը, արտադրողի և ապրանքային նշանի անվանում և 2021թ.-ի գնման պլանով նախատեսված ընդհանուր քանակը՝ յուրաքանչյուր

չափաբաժնի համար անհատապես: Ինչպես նաև նույն հավելված 1-ով սահմանվել է ընդհանուր պայմաններ, առ այն, որ բնութագրերում գնման առարկայի առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին կատարված հղումների հետ միասին հասկանալ «կամ համարժեքը» բառերը: Մատակարարման ժամկետները և քանակները. Պայմանագրի շրջանակներում Ապրանքի մատակարարումն իրականացվելու է 2021թ. տարվա ընթացքում, ըստ փաստացի պատվերների, ընդ որում յուրաքանչյուր պատվերի առավելագույն քանակը չի կարող լինել ավելի պայմանագրի ընդհանուր քանակի 1/2-ից, եթե դրան համաձայն չէ Վաճառողը: Առաջին խմբաքանակի մատակարարումը Գնորդը չի կարող պահանջել պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրից շուտ, եթե դրան համաձայն չէ Վաճառողը: Այնուհետև, մատակարարումները պետք է իրականացվեն ըստ փաստացի պատվերների՝ ոչ ուշ քան 5 աշխատանքային օրվա ընթացքում: Փաստացի կարիքից ելնելով նախատեսված քանակները կարող են ամբողջությամբ չպատվիրվել Պատվիրատուի կողմից և այդ մասով պայմանագիրը համարվում է լուծված հաշվարկային տարվա ավարտով: Մատակարարվող ապրանքները պետք է լինեն նոր, գործարանային փաթեթավորմամբ, պիտանելիության ժամկետները՝ հանձնման պահին առնվազն 75%-ը, բացառությամբ այն դեպքերի, երբ Պատվիրատուն կարիքից ելնելով համաձայնում է ընդունել ավելի կարճ ժամկետով ապրանք: Ապրանքի մատակարարումը՝ բեռնափոխադրումը, բեռնաթափումը և տեղափոխումը մինչև համապատասխան պահեստ, իրականացվում է Կատարողի ուժերով և միջոցներով ք. Երևան, Արմենակյան 108/4 հասցեով:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Զարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է նաև բողոքի քննությանը ներգրավված յուրաքանչյուր անձ և վերջինիս իր առարկությունների հիմքում ընկած փաստական հանգամանքները, որոնք ուղղված են բողոքով վկայակոչված փաստերի հերքմանը, պետք է նույնպես պարունակեն, ըստ էության, Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետով սահմանված դրույթներով նախատեսված փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ:

Վերոնշյալ իրավական նորմերի ու փաստական հանգամանքների հիման վրա, դրանք համադրելով Ընկերության կողմից ներկայացված բողոքի փաստական հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ բոլոր այն դեպքերում, երբ բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, մասնավորապես՝ երբ բողոքի վեճի առարկան հանդիսանում է հրավերում առկա որևէ պայմանի՝ գնումների օրենսդրությանը հակասելու հանգամանքը, ապա այդ՝ բողոքով վկայակոչված փաստական հանգամանքի ժխտման ապացուցման բեռը պետք է կրի պատվիրատուն, քանի որ Կարգի 22-րդ կետի իմաստով գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ: Ուստի, նման դեպքերում, բողոքի քննության ընթացակարգին մասնակցող պատվիրատուն է պարտավոր ապացուցել իր՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի պահանջների և բողոքի առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերն ու գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխանելու հանգամանքը:

Ամբողջ վերոգրյալների ու սույն գործի փաստերի հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Պատվիրատուն Բողոքներ քննող անձին չի ներկայացրել որևէ վերաբերելի ապացույց առ այն, որ վերջինիս կողմից թույլ չի տրվել Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտում՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, և որ «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/91» ծածկագրով բաց մրցույթի Հավելված 1-ով նախատեսված՝ տեխնիկական բնութագիրը, վեճի առարկա հանդիսացող 2-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով, կազմված է և համապատասխանում է Օրենքի 13-րդ հոդվածի և Կարգի 22-րդ կետի դրույթներին, սահմանված տեխնիկական բնութագրում առկա չափորոշիչները չեն խոչընդոտում հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը: Ընդ որում, այդպիսի հնարավորություն Պատվիրատուն ունեցել է բողոքի քննության ընթացքում՝ մինչև որոշման կայացման պահը:

Անդրադառնալով 1-ին չափաբաժնի մասով սահմանված ապրանքի մատակարարման ժամկետներին՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ բողոքի քննության ժամանակ Պատվիրատուի կողմից Հրավերով սահմանված ժամկետների օբյեկտիվության վերաբերյալ նույնպես չներկայացվեց համապատասխան վերաբերելի ապացույց: Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանվել է, որ կնքվելիք պայմանագրով ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, չպետք է պակաս լինի 20 օրացուցային օրից:

Այլ կերպ ասած՝ վերոնշյալ դրույթով նախատեսվել է այն նվազագույն ժամկետը, որն անհրաժեշտ է ապրանքը ժամկետում մատակարարելու, ըստ այդմ՝ մասնակցի կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման համար: Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ կախված գնման ենթակա ապրանքից, այդ ժամկետը պետք է լինի օբյեկտիվորեն հիմնավորված: Պատվիրատուն (պատասխանատու ստորաբաժանումը) գնման հայտը կազմելիս ապրանքի մատակարարման ժամկետը պետք է սահմանի՝ հաշվի առնելով գնման ենթակա ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ բոլոր կողմերը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների

խոչընդոտման առումով, հիմնավոր են, իսկ Ընթացակարգի պահանջներն անհիմն են, ինչի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/91» ծածկագրով բաց մրցույթի հրավերը՝ վեճի առարկա հանդիսացող 2-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով տեխնիկական բնութագրերը, իսկ 1-ին չափաբաժնի մասով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետը պետք է փոփոխել կամ դրա անհնարինության դեպքում հայտարարել չկայացած:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 26.10.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/100 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

Պարտավորեցնել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/91» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին փոփոխություններ կատարել հրավերի 1-ին, 2-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժիններում և պայմանագրի մատակարարման ժամկետում՝ սույն որոշմամբ նշված հիմնավորումներով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**